

5.11. Հատուկ պահպանվող տարածքները 2002 թվականին

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության ամփոփ տեղեկատվության, 2002թ. հանրապետության 2 ազգային պարկերի 3 պետական արգելոցների (միասին 218.8 հազ. հա) և 23 արգելավայրերի (81.7 հազ. հա) ընդհանուր մակերեսը կազմել է 300.5 հազ. հա: 2 ազգային պարկերի 3 պետական արգելոցների անտառածածկ տարածքը կազմել է դրանց ընդհանուր տարածքի 24.4%-ը (53.4 հազ. հա), մարգագետինները՝ 7.9%-ը (17.2 հազ. հա), ջրածածկ տարածքները՝ 57.4%-ը (125.7 հազ. հա), իսկ 10.3%-ը (22.5 հազ. հա)՝ այլ տարածքներն են: Հատուկ տարածքներով անցնող բոլոր կարգի ճանապարհների երկարությունը կազմել է 831 կմ:

Հատուկ պահպանվող տարածքների աշխատողների թվաքանակը տարեվերջին կազմել է 520 մարդ, որոնց 3.6%-ը գիտական աշխատողներն են, 57.7%-ը՝ պահպանության ծառայության աշխատողները, իսկ 38.7%-ը՝ այլ բնույթի աշխատողներ:

Ֆինանսական մուտքերը կազմել են 149.2 մլն. դրամ, որն կատարվել է պետական բյուջեի հաշվին և ամբողջությամբ ծախսվել է: Նյութական ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 17.3%-ը (25.8 մլն. դրամ), ոչ նյութական ծառայությունների վճարումները՝ 7.0%-ը (10.4 մլն. դրամ), գործուղման ծախսերը՝ 0.8%-ը (1.2 մլն. դրամ), աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները՝ 49.3%-ը (73.6 մլն. դրամ), պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները՝ 23.1%-ը (34.4 մլն. դրամ), այլ ծախսերը՝ 2.5%-ը (3.8 մլն. դրամ):